«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Պետական տարածք, պետական սահման, դրանց բովանդակության ժամանակակից մոտեցումները

ԱՌԱՐԿԱ Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ Մելքոնյան Լիանա

ՄԱՐԶ Կոտայք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ծաղկաձորի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն ----------3

Պետական տարածք, պետական սահման, դրանց բովանդակության ժամանակակից մոտեցումները---------- 4

Եզրակացություն---------- 14

Գրականություն---------- 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկիր-պետություն աշխարհագրական օբյեկտն ունի իր հատկանիշները, որոնք բնութագրում են նրա տեղը, դիրքը, ընդհանուր ու տարբերիչ գծերը, կշիռը ժամանակակից աշխարհում: Այդ հատկանիշները կարող են լինել բնաաշխարհագրական, տնտեսաշխարհագրական, ժողովրդագրական,պատմամշակութային, ինչպես նաև քաղաքաաշխարհագրական:

Որևէ պետություն կարող է գոյություն ունենալ միայն որոշակի սահմաններով եզրագծված տարածքում:Պետական տարածքի չափերը, ձևը, գծագրությունը ունեն շատ մեծ քաղաքաաշխարհագրական, ռազմաստրատեգիական ու տնտեսական նշանակություն:

Տարածքն ինքնին կարևորագույն ռեսուրս է,որը կարող է դառնալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը խթանող հզոր գործոն:Տարածքի քանակական բնութագրիչներից ոչ պակաս կարևոր է նաև տարածքի որական հատկանիշների ուսումնասիրությունը:Հենց այս հատկանշների շնորհիվ է որոշվում պետության զբաղեցրած տարածքի բնառեսուրսային ներուժը, որը հետևապես կարող է բնական նախադրյալ դառնալ երկրի զարգացման ու հզորացման գործում:

Սահմանների ուսումնասիրությունը հատկապես առաջնային է քաղաքական աշխարհագրության մեջ:Այսօր մարդկությանը համակած հակամարտությունները, բացահայտ ու թաքնված ընթացող պատերազմները կապված են սահմանների վերանայման ու հաստատման հետ:Հենց սահմանների միջոցով է որոշվում մարդկային հասարակության քաղաքաաշխարհագրական կառուցվածը, ամեն ժողովրդի գոյատևման, ինքնաճանաչման ու պետական դրսևորման պայմանները, պետությունների փոխհարաբերությունների ներկան ու ապագան:

Պետական տարածք, պետական սահման, դրանց բովանդակության ժամանակակից մոտեցումները

Հայտնի է, որ ամեն մի աշխարհագրական օբյեկտի գոյության առաջին և անհրաժեշտ պայմանը աշխարհագրական տարածքն է,որն ունի որոշակի տեղադիրք և որոշակի սահմաններ:Բացառություն չի կազմում նաև երկիր պետությունը, որը նույնպես աշխարհագրական օբյեկտ է:

Տարածքը պետության և պետականության կարևորագույն նյութական հիմքն է:

Պետական տարածք է կոչվում երկրագնդի մակերեսի որևէ հատված, որը գտնվում է որոշակի պետության գերիշխանության տակ և առանձնանում է պետական սահմաններով:

Պետական տարածքը բաղկացած է ցամաքային տարածքից (տերիտորիա), ջրային տարածքից (աքվատորիա) և օդային տարածքից (աէրոտորիա):

Ցամաքային պետական տարածքը ներառում է պետության գերիշխանության տակ գտնվող ամբողջ ցամաքը՝ ընդերքի հետ միասին, ջրային տարածքը (ներքին ջրավազանները և արտաքին ափամերձ ջրային տարածությունները որոշակի միջազգային իրավունքով հաստատված լայնության շերտով) դարձյալ ընդերքի հետ միասին:Այդ շերտը մայրցամաքային շելֆն է՝ ծանծաղուտը, և կարող է ունենալ մինչև 12 ծովային մղոն լայնություն (1 ծովային մղոնը հավասար է 1,85 կիլոմետրի):

Միջազգային իրավունքով այդպիսի գոտի է համարվում այն ջրայի տարածքը, որի խորությունը չի գերազանցում 200 մ, իսկ հատակի ռեսուրսներն էլ տեխնիկապես մատչելի են:Գոյություն ունի նաև 200-մղոնանոց տնտեսական գոտի հասկացությունը:Ի տարբերություն նախորդի՝ այն ենթական չէ ափամերձ որևէ երկրի իշխանությանը:Ափամերձ երկիրը կարող է այստեղ իրականացնել հանքային ռեսուրսների արդյունահանում, իսկ այլ երկրներ իրավունք ունեն այս գոտում իրականացնելու միայն նավարկություն, անցկացնելու մալուխներ, խողովակաշարեր և կատարելու թռիչքներ:Տնտեսական գոտին և ծանծաղուտը հաճախ գերազանցում են պետության ցամաքային մակերեսը և կարող են էականորեն ավելացնել երկրի տնտեսական ներուժը:

Օդային տարածքը՝ աէրոտորիան, ընդգրկում է ցամաքային և պետական տարածքի վրա գտնվող մինչև 25 կմ բարձրությամբ մթնոլորտի շերտը:

Միջազգային իրավունքի կարևորագույն պահանջներից է պետական տարածքի ամբողջականությունն ու անձեռնմխելիությունը:Արգելված է ուրիշի տարածքի զավթումը

և սահմանների միակողմանի փոփոխությունը ռազմական ուժի գործադրումով:Բոլոր տեսակի տարածքային վեճերը կարող են և պետք է լուծվեն խաղաղ միջոցներով:

Հայտնի է , որ երկրի մակերեսը պետությունների միջև բաժանված է ոչ միատեսակ սկզբունքներով և ոչ հավասարաչափ:Տարբեր պետական տարածքներ ունեն տարբեր մեծություն (մակերես), տարբեր ձև և այլ հատկանիշներ:Եթե օրինակ, աշխարհի ամենաընդարձակ պետության տարածքը (Ռուսաստանի Դաշնություն)արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ ձգվելով հազարավոր կիլոմետրեր, Եվրասիա մայրցամաքում զբաղեցնում է ավելի քան 17 մլն քկմ մակերես, ապա ամենափոքրը, որը գտնվում է Վատիկան պետության գերիշխանության տակ, զբաղեցնում է իտալիայի մայրաքաղաք Հռոմի մի փոքր՝ 0,44 քկմ (440 հա) մակերեսով թաղամասը միայն:

Պետական տարածքի չափերն ունեն շատ մեծ քաղաքաաշխարհագրական, ռազմաստրատեգիական ու տնտեսական նշանակություն:Այս համատեքստում հետաքրքիր է անդրադարձ կատարել հետևյալ օրինակին՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմի առաջին տարիներին Խորհրդային Միությունը կորցրեց իր եվրոպական ամենախիտ բնակեցված ու տնտեսապես զարգացած պետական տարածքի մեծ մասը, որը հավասար էր եվրոպական մի քանի պետությունների մակերեսին՝ միասինն վերցրած:Պատերազմը տևեց չորս տարի:Բայց երկիրը չկործանվեց: Չգրավված ընդարձակ տարածքների մարդկային ու բնական ռեսուրսների շնորհիվ հնարավոր եղավ պատերազմից հաղթանակով դուրս գալ:Մինչդեռ ավելի փոքր տարածք ունեցող շատ պետություններ, օրինակ Բելգիան, Հոլանդիան, նույնիսկ Լեհաստանն ու Չեխոսլովակիան ֆաշիստական Գերմանիայի կողմից նվաճվեցին հաշված օրերի ընթացքում:

Ինչպես տեսնում ենք, տարածքն ինքնին կարևորագույն ռեսուրս է:Բայց եթե այդ նույն տարածքում առկա են ընդերքի ու մակերևույթի բազմազան հարստություններ,
ապա այն դառնում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը խթանող հզոր գործոն:

Միշտ չէ, որ երկիր-պետության աշխարհագրական չափերի մեծությունն ինքնին ուղիղ համեմատական է տնտեսական զարգացման մակարդակին:Հայտնի է, որ Եվրոպայի միջին և փոքր պետությունների մեծ մասն ունի բարձր զարգացած տնտեսություն:Դրա պատճառներից մեկն այն է, որ դեռևս միջնադարում դրանց ոչ ընդարձակ տարածքի յուրացումն ավարտված էր, և տնտեսությունը սկսել էր զարգանալ ինտենսիվ ուղիով:

Ընդունված է պետություններն ըստ տարածքի մեծության դասակարգել հետևյալ կերպ.

Շատ փոքր-մինչև 25.000քկմ :Այդպիսին են աշխարհի պետությունների ավելի քան մեկ քառորդը :

Փոքր-25.000-150.000քկմ:Այս խումբը ամենամեծաքանակն է:Դրա մեջ են մտնում մասնավորապես Հայաստանը և մեր երկու հարևանները՝ Վրաստանը և Ադրբեջանը, ընդամենը 55 պետություն:

Միջին մեծության-150.000-350.000քկմ, այս խմբին են պատկանում Մեծ Բրիտանիան, Լեհաստանը, Ճապոնիան, ընդամենը 24 պետություն:

Խոշոր- 350.000-2.500.000քկմ ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Մեքսիկա, Իրան, Թուրքիա, ընդամենը 46 պետություն;

Գերխոշոր -2.500.000քկմ-ից ավելի (9 պետություն):Դասակարգման մեկ այլ խմբում ընդունված է նաև երկիր-հսկաներ տարբերակը, որոնք ունեն ավելի քան 3մլն քկմ տարածք, հետևաբար դրանց թիվը դառնում է յոթ:Սրանց բաժին է ընկնում երկրագնդի ցամաքային մակերեսի 44%-ը:

Կարևոր տնտեսաշխարհագրական ու նաև քաղաքաաշխաչհագրական հատկանիշ է պետական տարածքի ձևը, գծագրությունը:Աշխարհի քաղաքական քարտեզի օգնությամբ դժվար չէ առանձնացնել պետությունների խմբերն ըստ տարածքի ձևի (գծագրության):Դրանք են ձգված տարածքները (օրինակ, Չիլի, Նեպալ, Զամբիա), հավաք (կոմպակտ)տարածքները (Ֆրանսիա, Լեհաստան, Ուրուգվայ, Չեխիա), կղզային (Մեծ Բրիտանիա, Մադագասկար, Շրի Լանկա, Իսլանդիա), կղզեխմբային (արշիպելագային)՝ Ինդոնեզիա, Ֆիլիպիններ, Ճապոնիա:

Պետական տարածքի ձևը ազդում է տրանսպորտային ցանցի գծագրության ու խտության, մայրաքաղաքի, այլ տնտեսական կենտրոնների աշխարհագրական դիրքի, մատչելիության ու խոցելիության , տարբեր տարածամասերի հեռավորության ու տարանջատվածության վրա, պայմանավորում է բնակչության տարաբնակեցման ու տնտեսության տարածքային կառուցվածքի շատ առանձնահատկություններ:Կան դեպքեր, երբ պետության տարածքը միասնական չէ, այլ ընդհատված է այլ պետությունների տարածքներով:Այդպիսի անջատ տարածքներ են , օրինակ, Ալյասկան ԱՄՆ-ի համար, Կալինինգրադի մարզը Ռուսաստանի Դաշնության համար կամ Նախիջևանի Հանրապետությունը Ադրբեջանի համար:Նման տարածքները հայտնի են էքսկլավային տարածքներ (էքսկլավներ՝ արտատարածքներ) անունով:Հայտնի են նաև այնպիսի դեպքեր, երբ որևէ պետության սահմանները աշխարհագրականորեն ներառում են այլ պետության տարածքն ամբողջությամբ կամ դրա մի հատվածը:Այդպիսին են, օրինակ Լեսոտո պետությունը, որը բոլոր կողմերով շրջապատված է մեկ պետության՝ Հարավաֆրիկյան Հանրապետության

տարածքով:Այդպիսիք հայտնի են անկլավային տարածքներ (անկլավներ՝ ներտարածքներ)անունով:

Պետական տարածք են համարվում նաև ուրիշ երկրների սահմաններում գտնվող ծովային նավերը, տիեզերանավերը , ինքնաթիռները, եթե բարձրացված է իր երկրի դրոշը, ինչպես նաև օտարերկրյա դեսպանատների տարածքը:

Պետությունն իր տարածքի նկատմամբ ունի բացարձակ գերիշխանություն:

Տարածքի քանակական բնութագրիչներից ոչ պակաս, գուցե և ավելի կարևոր են տարածքի որակական հատկանիշները:Այդ հատկանիշներով է որոշվում պետության, նրա զբաղեցրած տարածքի բնառեսուրսային ներուժը:Բոլորովին տարբեր բնառեսուրսային ներուժ կարող են ունենալ տարածքի նույն քանակական ցուցանիշներ ունեցող պետությունները, եթե տարբեր են նրանց կլիմայական պայմանները, հողածածկն ու բուսածածկը, ջրային պաշարները ընդերքի հարստությունները: Մոտավորապես նույն չափի տարածքներ ունեն Սաուդյան Արաբիան ու Դանիային պատկանող Գրենլանդիա կղզին, Մոնղոլիան ու Իրանը, Չեխիան ու Հորդանանը:Սակայն հայտնի է, թե ինչքան տարբեր են այդ երկրների բնակչության կյանքի ու արտադրական գործունեության բնական պայմանները, այլկերպ ասած՝ տարածքների բնառեսուրսային ներուժը, հետևապես և երկրի զարգացման ու հզորացման բնական նախադրյալները:Որևէ երկիր-պետության տեղը և դիրքը աշխարհում ու տարածաշրջանում, նրա աշխարհաքաղաքական կշիռը որոշվում է ոչ միայն տարածքի չափերով, գծագրությամբ ու աշխարհագրական դիրքով , այլ նաև որակով, բնառեսուրսային ներուժով:

Երկիր-պետության քաղաքաաշխարհագրական կարևոր բնութագրիչներից է նաև պետական սահմանը:<<Սահմանների>> ուսումնասիրությամբ զբաղվում են տարբեր գիտություններ՝ աշխարհագրական, հասարակական, տեխնիկական. որոնց փոխազդեցության և փոխներթափանցման հատվածում ձևավորվել է <<լիմոլոգիա>> (լատ. limes-սահման բառից) գիտական ուղղությունը:Երկար ժամանակ աշխարհագրական լիմոլոգիան կենտրոնացած էր սահմանների նկարագրության վրա, ուշադրություն չարժանացնելով նրանց ձևավորման և էվոլյուցիայի տեսական հարցերը:Անցյալ դարի կեսերին, երբ համաշխարհային պատերազմների արդյունքում մասսայաբար փոխվում էին պետական տարածքներն ու սահմանները , ակտիվացան աշխարհագրական սահմաններին նվիրված ուսումնասիրությունները և բարձրացավ դրանց տեսական մակարդակը:

Աշխարհագրական սահմանի միջոցով է, որ հնարավոր է լինում ներկայացնել երկրի աշխարհագրական թաղանթի դիսկրետ, այսինքն տրոհված , տարածական առանձին միավորներից բաղկացած ամբողջական պատկերը, առանձնացնել աշխարհագրական գոտիները , զոնաները, տարբեր բավանդակության ու մեծության երկրահամակարգերը: Հասարակական կյանքում նույնպես <<սահմանը>> դրսևորվում է ամենուրեք՝ հասարակության տարածքային կազմակերպման ոլորտներում (տնտեսություն, քաղաքականություն, հոգևոր-մշակութային և այլն), դրանց մակարդակներում (աշխարհաքաղաքական ռեգիոններ, պետություններ, վարչաքաղաքական միավորներ, տնտեսական շրջաններ և ենթաշրջաններ):

<<Սահման>>կատեգորիային առաջնային դեր է հատկացվում քաղաքական աշխարհագրության մեջ:Անվիճելի փաստ է, որ համամոլորակային, տարածաշրջանային, լոկալ ընդգրկում ունեցող բոլոր տեսակի տնտեսական, էկոլոգիական, քաղաքակրթական, էթնիկական, միջպետական ու ազգամիջյան հիմնախնդիրներն այսպես, թե այնպես հանգում են հին սահմանների վերանայման ու նոր սահմանների հաստատման հիմնախնդիրին:

Վերլուծելով մարդկությանը համակած ներքին հակասությունները, հակամարտությունները, մոլորակի տարբեր շրջաններում ընթացող բացահայտ ու թաքնված պատերազմները, մասնագետները հանգում են այն հետևությանը, որ այդ բոլորը, ի վերջո խտացված է սահմանների հիմնախնդրի մեջ:Սահմաններն են կանխորոշում մարդկային հասարակության քաղաքաաշխարհագրական կառուցվածքը, նրա բազմաբնույթ ու բազմաշերտ գործունեության տարածքային կազմակերպումը, ամեն մի ժողովրդի գոյատևման, ինքնաճանաչման ու պետականորոն դրսևորման պայմանները, հարևան ժողովուրդների ու պետությունների փոխհարաբերությունների ներկան ու ապագան:

Սահմանների հիմնախնդիրը նոր սրություն է ձեռք բերում՝ կապված հասարակական կյանքի ներկայումս ծավալվող գլոբալիզացիայի երևույթի հետ:Գլոբալիզացիան օբյեկտիվորեն նվազեցնում է երկրների տարանջատող պետական սահմանների նշանակությունը:Վերջիններս դառնում են թափանցիկ և ինչ-որ իմաստով նույնիսկ ձևական:Այդպիսին են օրինակ Եվրամիության անդամ պետությունների սահմանները: Մյուս կողմից, մեծանում է հակագլոբալիստական շարժման ակտիվությունը:Այս շարժումը նպատակ ունի չեզոքացնել կամ մեղմել այն վտանգը, որ գլոբալացման արդյունքում կախվում է փոքր ու միջին ազգային պետությունների ու դրանց ժողովրդի ազգային –մշակութային ինքնության պահպանման վրա:

Նոր միջազգային իրադրությունը քաղաքաաշխարհագրական լիմոլոգիայի առջև նույնպես նոր խնդիր դրեց:Դա վերաբերվում էր հատկապես կուտակված հարուստ փաստական նյութի գիտական ընդհանրացմանը և տեսական իմաստավորմանը: Հետաքրքրական է մասնավորապես քաղաքական սահմանների դասակարգումը:

1.Ըստ ձևաբանական հատկանիշի առանձնացվող սահմաններ՝

ա/ Երկրաչափական սահմաններ, դրանք քարտեզի վրա գծված են քանոնով, առանց հաշվի առնելու տարածքի ֆիզիկական պայմանները:Երկրաչափական սահմանների տարատեսակ են աստղաբաշխական սահմանները, որոնք անցնում են միջօրեականներրոով ու զուգահեռականներով:Երկրաչափական սահմաններ շատ են հատկապես Աֆրիկայում / Լիբիա-Չադ, Ալժիր –Մալի և այլն/ և Հյուսիսային Ամերիկայում՝ ԱՄՆ-Կանադա:

բ/ Բնական սահմաններ. Դրանք համընկնում են գետերի , լեռնաշղթաների և ռելիեֆի այլ ձևերի բնական սահմանագծին:

2. Ըստ ծագումնաբանական հատկանիշի տարբերվում են .

ա/սահմաններ, որոնք ձևավորվել են մինչև տարածքի բնակեցումն ու յուրացումը:Դրանք մեծ մասամբ համընկնում են երկրաչափական սահմանների հետ:Դրանց անցկացումը մեծ բարդությունների հետ կապված չի եղել և լուրջ բախումներ չի առաջացրել:

բ/ Վրադիր սահմաններ՝ անցկացվել են արդեն յուրացված ու խիտ բնակեցված տարածքով , որի տրոհումն ու տարաբաժանումը կատարվել են լուրջ բախումների հետևանքով և անցել են հիվանդագին:Այդպիսիք են ներկայիս պետությունների ճնշող մեծամասնության սահմանները:Սրանց հետ է կապված նաև ներկայիս սահմանային վեճերի մեծ մասը:

գ/ Ռելիկտային /մնացորդային/ սահմաններ:Դրանք պատմականորեն ժառանգված սահմաններ են , որոնք եղել են նախկին , այժմ վերացած ցեղային միությունների կամ պետական կազմավորումների միջև:Այդպիսիք են ,օրինակ,Լատինական Ամերիկայի երկրների, ինչպես նաև Եվրոպայի ու Ասիայի երկրներից շատերի ներկայիս սաահմանները:

3.Ըստ իրավական վիճակի առանձնացնում են.

ա/ Միջազգային իրավունքով ճանաչված սահմաններ:Այս կարգավիճակն ունեն աշխարհի պետությունների գերակշիռ մեծամասնության սահմանները:Այդ սահմաններն են պատկերվում աշխարհի քաղաքական քարտեզներում:

բ/Ֆիկտիվ, շինծու սահմաններ:Սա Յն դեպքն է, երբ պետական սահմանն ունի միջազգային ճանաչում, ամրագրված է միջազգային փաստաթղթերում ու քարտեզի վրա, բայց գոյություն չունի իրականում:Այդպիսին է , օրինակ, Իսրայել պետության 1947թ. ՄԱԿ-ի կողմից հաստատված սահմանը:

գ/Իրականում գոյություն ունեցող, բայց միջազգային իրավունքով չճանաչված սահմաններ:Դրանք ինքնահռչակ, դե ֆակտո գոյություն ունեցող քաղաքական-տարածքային կազմավորումների սահմաններն են:Այդպիսին են, օրինակ, Կիպրոսի Թուրքական Հանրապետության, Արցախի Հանրապետության, Թայվանի Հանրապետության և այլնի սահմանները:

4.Ըստ գործառույթների առանձնացվում են.

ա/ Անջրպետող /արգելափակող/ սահմաններ:Դրանց հիմնական գործառույթն է թույլ չտալ տնտեսական, մշակութային և այլ ազատ շփումներ հարևան պետությունների միջև:Այդպիսին էին ԽՍՀՄ պետական սահմանները (<<երկաթյա վարագույր>>):Այդպիսին են Թուրքիայի և Ադրբեջանի սահմանները Հայաստանի հետ, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի սահմանները Վրաստանի հետ:

բ/Կոնտակտային /շփման/ սահմաններ:Դրանք այսպես կոչված <<բաց>> սահմաններն են, որոնք հատելու համար հարևան պետության քաղաքացիներից հատուկ թույլտվություն չի պահանջվում:Այդպիսին են, օրինակ, Եվրամիության ներքին սահմանները:

գ/Զատող սահմաններ: Զտման գործառույթ ունեն այն պետությունների սահմանները, որոնք մուտքի և ելքի թուլտվություն տալիս են ոչ բոլոր ապրանքներին /կատարում են զտում/:Արգելում են , օրինակ, շների, այլ կենդանիների, բույսերի ու դրանց սերմերի, սննդի որոշ տեսակների ազատ ներմուծումն ու արտահանումը:

Պետական սահմանը պետական տարածքը եզերող գիծն է Երկրի մակերեսին և այդ գծով անցնող՝ Երկրի մակերեսին ուղղահայաց երևակայական հարթությանը դեպի մթնոլորտ /25կմ բարձրությամբ/ և Երկրի խորքը:

Ինչպես պետական տարածքը, այնպես էլ պետական սահմանը կարող է լինել ցամաքային, օդային և ջրային:

Աշխարհի քաղաքական քարտեզը բազմաթիվ կարճ ու երկար, գալարուն և ուղղագիծ սահմանագծերով տարանջատված տարածքների մի վիթխարի խճապատկեր է, որն իր բարդությամբ հանդերձ, հստակ պատկերացում է տալիս ներկայիս քաղաքական բաժանման մասին:Այդ վիճակը ստեղծվել է ոչ միանգամից ու

պատահականորեն:Դա մարդկության բազմադարյան զարգացման արդյունք է:Արդյունք է արյունահեղ պատերազմների ու խաղաղ բանակցությունների, ժողովուրդների կամավոր տեղաշարժերի ու բռնագաղթերի, էթնիկական ու կրոնական հակամարտությունների ու միությունների, հին պետությունների կործանման ու նորերի ծնունդի:Եվ ամեն մի այդպիսի իրադարձություն անխուսափելիորեն իր հետ բերել է պետական սահմանների փոփխության:

Աշխարհը վերաբաժանելու և պետական սահմանները վերագծելու ձգտումը երկու համաշխարհային պատերազմենրի պատճառ է դարձել:

Նախկինում սահմանային փոփոխությունները ընթանում էին գրեթե բացառապես ուժի դիրքերից, միշտ հաղթում էր ուժեղը և <<արդարացի>> էր ուժեղը՝ <<հաղթողին չեն դատում>> հայտնի սկզբունքով:Ներկայումս էլ աշխարհի իրադրության վրա ազդեղ գլխավոր գործոնը ուժն է, բայց ոչ ռազմական, այլ նաև տնտեսական, ֆինանսական, հոգևոր-մշակութային:

Անկախ նրանից, թե ինչպիսիք են պետական սահմանների փոփոխության դրդապատճառները և եղանակները, ի վերջո հասնում է այն պահը , երբ փոփոխությունը պետք է ձևակերպվի պաշտոնապես՝ երկկողմ, հաճախ նաև բազմակողմ պայմանագրերի միջոցով: Երբ սկզբունքային փոխհամաձայնությունը ձեռք է բերվել , սկսվում է դրա իրականացման գործընթացը:Այն կատարվում է երկու փուլով:

Առաջին փուլում կատարվում է սահմանի դելիմիտացիա /լատ.delimitation- <<սահմանել>> բառից/ , այսինքն՝ տեքստային նկարագրությամբ և դրան կցվող փոքրամասշտաբ քարտեզով որոշվում է սահմանի ընդհանուր ուղղությունը:Սովորաբար սահմանների դելիմիտացիայի մասին համաձայնագիրը և քարտեզը համարվում են պետությունների միջև կնքվող պայմանագրի բաղկացուցիչ մաս:

Դելիմիտացիայի հիման վրա կատարվում է երկրորդ փուլը՝ սահմանի դեմարկացիա /լատ.demarcation –անջատում , տարաբաժանում/: Սա աշխատանքի այն փուլն է, երբ երկու կողմերի մասնագետներից /զինվորականներ, աշխարհագետներ, քարտեզագիրներ, և այլն/ բաղկացած հանձնախումբը տեղանքում ճշտում է սահմանագիծը, տեղադրվում են պետական սահմանանշանները և որոշում

են դրանց ճշգրիտ աշխարհագրականները կոորդինատները:Այնուհետև կատարվում է սահմանաշերտի մանրամասն տեղագրական կամ աէրոհանույթ, և կազմվում է խոշորամասշտաբ քարտեզ/հատակագիծ/, որի պաշտոնապես հաստատված ու կնքված օրինակները պահվում են շահագրգռ կողմերի համապատասխան նախարարություններում:

Նոր՝ ժամանակակից քաղաքական աշխարհագրությունը ելնում է այն մեթոդաբանական դրույթից, որ այժմ ձևավորվել է քաղաքական սահմանների համաշխարհային համակարգ և կոնկրետ, ցանկացած տիպի ու մակարդակի սահմանի ուսումնասիրությունը պետք է կատարվի այդ համակարգի հաշվառմամբ և դրա կազմում:Քաղաքական սահմանների համաշխարհային համակարգի մասին տեսության համաձայն ընդհանրացված ձևով առանձնացնում են ներպետական, պետական և վերպետական սահմաններ:

Համամոլորակային կամ նույնն է, թե վերպետական մակարդակը գործ ունի պետական սահմանները շրջանցող, դրանց հետ հաշվի չնստող երևույթների հետ:Հայտնի է, որ այդպիսի երևույթներն են ապրանքների, կապիտալի, ինֆրմացիայի, մարդկանց, բնական միջավայրն աղտոտող քիմիական տարրերի անդրսահմանային հոսքերը, որոնք հասարակության տնտեսական գործունեության ինտերնացիոնալացման արդյունք են:Այդպիսին է նաև տարբեր բնույթի միջազգային կազմակերպությունների իրավասությունների ընդլայնումը և երկիր-պետությունների վրա նրանց ազդեցության մեծացումը:Մասնագետներն այդ երևույթների անխուսափելի աճը բացատրում են աշխատանքի միջազգային բաժանման անընդհատ խորացման, կոմունիկացիաների և կապի միջոցների հարաճուն զարգացման օբյեկտիվ բնույթով:Արդյունքում նվազում է պետական սահմանների նշանակությունը:Դրանք փոխում են իրենց գործառույթները , դառնում են ավելի <<թափանցիկ ու մատչելի>> և աստիճանաբար կորցնում են իրենց բաժանարար գործառույթը:Այս տեսակետի ծայրահեղ տարատեսակն այն է, որ մարդկության զարգացման հիշյալ միտումը ի վերջո պետք է հանդեցնի ազգային պետությունների և պետական սահմանների վերացմանը:

Այլ մասնագետներ համարում են, որ հասարակական կյանքի ինտերնացիոնալացումը չի կարող ստեղծել աշխարհ առանց ներքին սահմանների , այլ հակառակը՝ այդ պրոցեսը հետևանք է այն բանի , որ աշխարհը բաժանված է հարաբերականորեն անկախ հատվածների՝ ինքնիշխան պետությունների:Դրանցից յուրաքանչյուրն ունի իր սեփական օրենքները, արտադրական մասնագիտացումը, ներքին կյանքի կազմակերպման յուրահատկությունները, որոնցով տարբերվում է մյուսներից:Իսկ կյանքի ինտերնացիոնալացումը, հատուկ շարժումներն ու հոսանքները /կապիտալի, ապրանքների, ինֆորմացիայի, միգրանտների և այլն/ տեղի են ունենում, երբ կա <<պոտենցիալների տարբերություն>>:Հետևությունն այն է, որ պետական

սահմաններով առանձնացված տարածքային միավորները հասարակական կյանքի զարգացման անհրաժեշտ պայմանն են:

Սահմանների համաշխարհային համակարգերի հաջորդ մակարդակը պետական սահմանն է:Սահմաններն իրավական ձևակերպում ունեցող ռեալ իրողություններ են:Դրանք միաժամանակ արտահայտում են յուրաքանչյուր սահմանագծված տարածքում ապրող մարդկանց քաղաքական, ազգային սոցիալտնտեսական , մշակութային, դավանական նույնականությունը:Այդ նույնականությունը կարող է դրսևորվել երկակի:Մի դեպքում, երբ բնակչության արդեն ձևավորված նույնականության հիման վրա գոյանում է երկիր-պետություն իր որոշակի սահմաններով:Մյուս դեպքում այլ, ինչ-ինչ հանգամանքներում գոյանում է ինքնիշխան երկիր-պետություն նախօրոք կանխագծված սահմաններով, հետո միայն, ժամանակի ընթացքում ձևավորվում է այդտեղ բնակվող մարդկանց նույնականությունը, որն ավելի հասունանալով, կարող է վերածվել քաշխարհաքաղաքական հզոր գործոնի:Ուսումնասիրողներից շատերի կարծիքով նկարագրված երևույթը խթանում է ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, որը հեշտությամբ կարող է վերածվել ազգայնականության:

Սահմանների համաշխարհային համակարգերի հաջորդ մակարդակը ներպետականն է և հարկ է ընդգծել , որ դրանք նույնպես բնակչության մոտ նույնականացման զգացմունքներ բորբոքող հզոր գործոն են , առավել ևս երբ գումարվում են կրոնական, դավանաբանական ու տարածաշրջանային շարժումներին:Այստեղ արդեն էական նշանակություն է ստանում սահմանների իրավական վիճակը:

Մշակված են քաղաքական սահմանների համաշխարհային համակարգի զարգացման և դրանց ֆունկցիաների փոփոխությունների տարբեր սցենարներ:

Նեոլիբերալ սցենարը նախատեսում է բոլոր տեսակի քաղաքական սահմանների միանման, մեկ ուղղությամբ զարգացում:Այդ ուղղությունը սահմանների տարանջատող ֆունկցիայի թուլացումը և միավորող , ինտեգրող ֆունկցիայի ուժեղացումն է:Ռեալիստական սցենարը առավել հավանական է համարում միջազգային հարաբերությունների զարգացման այն տարբերակը, երբ տարածքային սահմանային վեճեր ունեցող հարևան պետությունները ելնելով իրենց էգոիստական շահերից , պետք է նախընտրեն ոչ թե հակասությունների սրումը , որը կարող է հանգեցնել զինված բախումների , այլ բանակցային գործընթացի ծավալումն ու խորացումը:Այլ կերպ ասած, տվյալ դեպքում այն համոզմունքն է գործում , որ տարածքի պատկանելիության հետ

կապված վեճերի լուծումը խաղաղ բանակցությունների ու փոխզիջումների միջոցով ապահովում է սահմանամերձ գոտիների բարգավաճում և բնակչության բարեկեցության աճ, որ տնտեսական գործոնը կլինի ավելի ուժեղ, քան բնակչության <<տարածքային նույնականության>> զգացմունքը, այսինքն էմոցիոնալ /զգացմունքային /գործոնը:Եվ պեսեմիստական սցենարի համաձայն քաղաքական սահմանների համաշխարհային համակարգի ապագան կանխորոշող գլխավոր ուժը ներկա բազմազգ պետությունների կազմալուծումն է, որը տեղի է ունենում էթնիկական սկզբունքով:Բանն այն է, որ ներկայումս աշխարհում հաշվվող առնվազն 5000 տեղաբնիկ ժողովուրդները, որոնց զգալի մասը պահպանել է իր տարածման արեալները բնակվում է առավելագույնը 200 պետությունների քաղաքական սահմաններում:Քիչ չեն նաև այն տեղաբնիկ ժողովուրդները, որոնք այժմ գտնվելով այլ պետության կազմում , պահպանել են նաև իրենց էթնիկական, ազգային ու տարածքային նույնականացումը:

Իսկ ամեն մի այդպիսի ժողովուրդ պետական տարածքի տրոհման ու քաղաքական սահմանների վերաձևման վտանգ է ներկայացնում:Այս սցենարի հեղինակներն առավել հավանական են համարում այնպիսի զարգացումը, երբ միջազգային իրավունքի երկու հայտնի՝ ազգերի ինքնորոշման և պետական տարածքի ամբողջականության պահպանման սկզբունքները կշարունակվեն դիտվել որպես համազոր սկզբունքներ, իսկ իրական կյանքում նոր ուժով կդրսևորվի առաջինը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պետական տարածքների և սահմանների հետազոտման խնդիրը մարդկային հասարակության քաղաքական տարածքային կազմակերպման և միջազգային քաղաքականության հանգուցային հարցերի շարքում առաջնային է, հատուկ կարևորություն է ստանում հատկապես դրանց ուսումնասիրումը գեոպոլիտիկական մակարդակով:Տարածքը որպես բնական ռեսուրս, որպես բնական հարստությունների կրող և երկրի աշխարհագրական դիրքի վրա ազդող հզոր գործոն առաջիկայում էլ շարունակելու է առաջատար դեր խաղալ քաղաքական սահմանների համաշխարհային համակարգի զարգացման գործում:Ուսումնասիրելով տարածքի չափերը, գծագրությունը բնառեսուրսային ներուժը կարելի է որոշել երկիր-պետության քաղաքաաշխարհագրական կշիռը, տեղը և դիրքը աշխարհում, տարածաշրջանում:Կարևորում եմ նաև պետական սահմանների ուսումնասիրությունը, քանի որ մոլորակի տարբեր շրջաններում ընթացող բացահայտ ու թաքնված

պատերազմները ի վերջո խտացված են սահմանների հիմնախնդրի մեջ:Ուսումնասիրելով սահմանները կարել է որոշել մարդկային հասրակության քաղաքաաշխարհագրական կառուցվածը, ամեն մի ժողովրդի գոյատևման, ինքնաճանաչման պայմանները, հարևան պետությունների հետ փոխհարաբերությունների ներկան ու ապագան:




NL
B

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վալեսյան Ա.,ՎալեսյանԼ. ,Քաղաքական աշխարհագրություն-Եր., ԵՊՀ հրատ. 2005
2. Սարիբեկյան Ս.Լ. <<Պետական տարածք աշխարհաքաղաքական ռեսուրսի հետազոտության խնդրի մասին, Երևան 2013
3.Լ.Վալեսյան:Գիտական աշխատությունների ժողովածու: Աշխարհագրական սահմանները և տարածքը որպես գիտական կատեգորիա:<<Материалы конференции, посвященной 70-летию географического факылтета ЕГУ>>,2005г.
4.Աշխարհագրություն 10-րդ դասարան:Դասագիրք/Մաքսիմ Մանասյան,Թրահել Վարդանյան, Արմեն Հովսեփյան,Արսեն Գրիգորյան, Գուրգեն Հովհաննիսյան,Ակսել Պոտոսյան-Եր.:<<Զանգակ-97>>, 2010